


ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի Ցայտարարություն

Սեպտեմբեր 25-30, միջ-պետական յարաբերությունները զարգացման ծիրին ներս, կը նախատեսուի ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ԱԺ պատուիրակության այցելությունը Օթթաուա: Մտահոգիչ է իմանալ, որ Ալեն Սիմոնյանի պատուիրակության կազմին մէջ ներառուած են միայն իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» (ՔՊ) կուսակցութեան անդամները՝ առանց ընդդիմութեան պատգամաւորներու: Հայաստանի Ազգային Ժողովի Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան ընդդիմադիր պատգամաւորները դիտումնաւոր դուրս մնացած են այս պատուիրակութեան: Այս երեւոյթը ինքնին՝ ժողովրդավարական կանոնակարգի խախտում է:

Ժողովրդավարութեան տարրական սկզբունքներն ու մարդու հիմնական իրաւունքները ոտնահարող ՀՀ գործող վարչախումբի այցելությունը ողջունելու մտադրութիւն չունի գանատահայութիւնը: Ընդդիմադիր ցուցարարներուն նկատմամբ անհամաչափ ուժի օգտագործումով գործող վարչախումբի գործելաձեւը կը հակասէ ժողովրդավարութեան սկզբունքներուն: Այս բոլորը դատապարտելի արարքներ են ժողովրդավարութեան դրօշակիր Գանատայի մէջ ապրող ժողովուրդին համար:

Վարչախումբին կողմէ որդեգրուած ապագային քաղաքականութեան հետեւանքով՝ աններելի նահանջ կ'արձանագրուի ազգային մեր կենսական շահերուն նկատմամբ: Արցախի հիմնախնդիրը վերստին միջազգային օրակարգ բերելու հնարաւորութեան ուղիներու որոնման հետամուտ Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքները խափանող Ալեն Սիմոնյանն ու ՔՊ-ական գործող վարչախումբը՝ հետեւողական զիջումներով, սահմանազատման ապօրինի եւ անճանապարհական գործընթացով, կամակատարը դարձած են թուրք-ատրպէյճանական քաղաքական օրակարգին:

Մենք համոզուած ենք, որ Հայաստանի գործող վարչախումբը ոչ մէկ իրաւունք ունի Արցախի կարգավիճակը ճակատագրելու ու Հայաստանի ինքնիշխան սահմանները կանխակարգելու, եւ առ այդ վերստին դատապարտելով իրենց ազգակործան ընթացքը, յառաջիկայ օրերուն Գանատա ժամանող վարչախումբի կազմը անցանկալի պատուիրակութիւն կը նկատենք:



Իրան «Զանգեզուրի Միջանցք»ի Հարցին Մէջ Վճռական Է Եւ Մտադիր Զէ Զիջելու. Իրանի Յեղափոխական Պահակագունդ

Իրան վճռական է «Զանգեզուրի միջանցք»ի հարցին մէջ եւ մտադիր է զիջելու: Այս մասին կը նշուի Իրանի Յեղափոխական պահակագունդին տարածած հաղորդագրութեան մէջ:

«Իբրեւ շրջանային տէրութիւն՝ Իրան տասնամեակներու ընթացքին ապացուցած է իր վճռականութիւնը, ներառեալ յաղթելով Սատամ Հիւսէյնի վարչակարգին դէմ պատերազմին մէջ: Իրանը յստակ ցոյց տուած է, որ ոչ մէկ արտաքին ուժ՝ ըլլա՛յ այդ քաղաքական, թէ զինուորական ճնշում, ի վիճակի է թուլացնելու իր ազդեցութիւնը:

Շրջանային հաւասարակշռութիւնը խախտելու որեւէ փորձ՝ շրջանցելով Իրանի շահերը, պիտի բախի ուժեղ դիմադրութեան: Մեր երկիրը պիտի շարունակէ

պաշտպանել իր դիրքերը քաղաքական եւ ռազմավարական բոլոր հարցերուն մէջ», կ'ըսուի վերոնշեալ հաղորդագրութեան մէջ:

Թուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա մէկ օր առաջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին մեկնաբանած էր, այսպէս կոչուած, «Զանգեզուրի միջանցք»ին շուրջ տարբեր դիրքորոշումներ ունենալու պատճառով Իրանի եւ Թուսիոյ միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները:

«Լրատուամիջոցներուն մէջ շրջանառուող զրպարտիչ մեղադրանքները իբրեւ թէ շրջանին մէջ աշխարհաքաղաքական սահմաններու փոփոխութեան, Հայաստանի գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան սպառնալիքներու վերաբերեալ, իրականութեան հետ կապ չունին», պնդած էր Զախարովա:

Գոյժ

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն կը գուժէ մահը հաւատաւոր եւ վաստակաշատ դաշնակցական ընկեր ՏՈՒԹՔՎԱՅԻՆ ՏԵՐ ԳԱԼՈՒՍԵԱՆԻ, որ պատահեցաւ չորեքշաբթի, 4 սեպտեմբեր 2024-ին:

Ա մ փ ո փ կ ե ն ս ա գ ռ ա կ ա ն ը կ ար դ ալ է ջ: Յուղարկաւորութեան ընթացքին ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի խօսքը կարգաւ է ջ, Համագրայինի Կեդրոնական վարչութեան խօսքը կարգաւ է ջ:



Մոտիվ 45

«Հորիզոն»ի 45-ամեակի հանդիսութիւններ

- Թորոնթօ - Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2024
- Գեմպրի - Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2024
- Մոնթրէալ - Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024

Շուտով ցաւ Վանգուվըրի մէջ



MAZDA GABRIEL ANJOU

THE ALL-NEW 2024 MAZDA CX-5

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՕՄ-ի Ամենօրեայ վարժարանի 46-րդ վերամուտը

Առաջին զանգը դարձեալ հնչեց



Թորոնթոյի ՀՕՄ-ի «Ռուբինա» Մանկամասերի, Պապայեան մանկապարտեզի, Գոլոյեան նախակրթարանի եւ Լափոյեան երկրորդական Վարժարանի 46-րդ վերամուտի զանգը հնչեց Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2024-ին, առաւօտեան ժամը 9:00-ին: Տնօրէնութիւնը, ուսուցչակազմը, աշակերտութիւնը եւ ծնողք վերադարձան նպատակաւորաբար աշխատանքի:

գիտակցութիւն, դպրոցական ապահովման ծրագրերի մը մէջ: Ան շնորհակալութիւն յայտնեց վարժարանի բոլոր բարեբարներուն եւ «Սողոմոն Թէ՛՛՛՛րեան» կոմիտէութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ ուղեկից միութիւններուն՝ իրենց շարունակական անվերապահ աջակցութեան ու հոգատարութեան՝ կրթական այս օճախին վերելքին ի նպաստ:

Գիրէշեանի, Տէր Հայկ Քահանայ Եպիսկոպոսի եւ Պատուելի Զոհրապ Սարգիսեանի Տէրունական աղօթքով ու «Պահպանիչ»ով փակուեցաւ ՀՕՄ-ի Ամենօրեայ վարժարանի 46-րդ վերամուտի արարողութիւնը, որմէ ետք

աշակերտները ուսուցիչներուն առաջնորդութեամբ ուղղուեցան իրենց դասարանները՝ յաջողութիւններով լեցուն ուսումնական նոր տարեշրջան մը սկսելու համար:

Տնօրէնութիւն

ՀՕՄ-ի Ամենօրեայ Վարժարանը, իր 670 աշակերտներով եւ 75 անձնակազմով ու պաշտօնեաներով, Թորոնթոյի միակ ամենօրեայ կրթական հաստատութիւնն է, որ առաւելագոյն ճիգերով կը շարունակէ իրագործել հայապահպանման իր վեհ առաքելութիւնը:

Ապա խօսք առաւ տնօրէն Բաֆֆի Սարգիսեան, որ յայտնեց, թէ մեծ պատիւ է 2 տարեկան հայ մանուկէն մինչեւ 18 տարեկան հայ երիտասարդին դուրսդուրալ, դաստիարակել, հոգին ազնուացնել, հայկական շունչով սնուցանել եւ անոր ապագայի մարտահրաւէրները դիմագրաւելու պատրաստել: Ան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որ վարժարանին կը պարգևեն այդ հոգեպարար առիթը: Վարժարանի 46-րդ տարեշրջանի սեմին, պարուն Սարգիսեան իր խօսքին մէջ յիշեց նաեւ մեր վարժարանի վերելքին սատարող հիմնադիր բարերար, հանգուցեալ տիկին Արմէնուհի Գոլոյեանը:

Այնճարի հիմնադրութեան 85-ամեակ Խաչր, Լեռը, Հաւատքը

Երբ այսօր կ'ոգեկոչենք Այնճարի հիմնադրութեան 85-ամեայ յորելեանը, բնականաբար պիտի յիշատակենք նաեւ Մուսա Լեռան դիւցազնամարտը, երբ բռն մը հայեր պատմական իրենց բնօրրանը պաշտպանելու համար, Վարդանանց հաւատքով կոփուած, լեռան հետ միաձոյլ՝ բարձրացան, խոյացան ու ծառայեցան:

Թշնամին դիմագրաւելու եւ «Որ ոչ գիտէ զմահ, երկնչի ի նմանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ» նշանաբանով աներկիւղ ու աննահանջ մահուան հետ գոյամարտ էր Մուսա Լեռան հերոսամարտը, որուն ընթացքին Մուսա Լեռան գիւղերու հայութիւնը համակուած էր այն խոր ինքնագիտակցութեամբ, որ իր հաւատքն ու իրաւունքները մինչ ի մահ պիտի պաշտպանէ:

Հայոց ցեղասպանութեան յաջորդող ժամանակահատուածին, տարասփիւռ հայկական գաղթօճախներու հիմնադրման փուլին, Մուսա Լեռան վտարանդի ժողովուրդը, բազում դժուարութիւններու ու տառապանքներու բովանդակ անցնելով, Լիբանանի մէջ հիմը դրաւ սփիւռքեան իր կանգառին: 1939-ի Այնճարի առաջին սերունդին վիճակուած էր՝ կազմակերպել նորաստեղծ գիւղին կեանքը, ազգային եւ հոգեւոր արժէքներով կրթել սերունդները ու կերտել գաղափարապաշտ եւ ազգային իր պատկանելիութեան գիտակից Այնճարի երիտասարդութիւնը:

Վարժարանի Ծիլ դասարանէն մինչեւ 12-րդ կարգի աշակերտները, իրենց ուսուցիչներուն ընկերակցութեամբ, ուղղուեցան Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցի, ուր դիմաւորուեցան թորոնթոյի հայ եկեղեցիներու հոգեւոր հովիւներու եւ ներկայացուցիչներու, վարժարանի տնօրէնութեան եւ կրթական մարմինին կողմէ: Վերամուտի պաշտօնական արարողութեան ներկայ գտնուեցան ՀՅԴ «Սողոմոն Թէ՛՛՛՛րեան» կոմիտէի, ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի եւ Շրջանային վարչութեան, Հայ Կեդրոնի յարկին տակ գործող քոր միութիւններու եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ներկայացուցիչները:

Ան նաեւ աւելցուց, թէ մեր ժողովուրդին եւ հայրենիքին ապրած դժուար օրերուն կրկնակի կարեւոր կը դառնայ հայ վարժարանը կանգուն եւ ծաղկուն պահելը սփիւռքի մէջ: Երբ շատեր կը քննադատեն սփիւռքը եւ կը համարեն անոր դժուարութիւնները որպէս անխուսափելի ճակատագիր, մեր վարժարանի հիմնադիր տնօրէն պարոն Մարգար գրած էր պատասխան՝ «Ես ճակատագրին հաւատացողը չեմ, երբեք չեմ եղած, բայց խոր հաւատք ունիմ ազգային դաստիարակութեան եւ ազգային ինքնագիտակցութեան վրայ, որուն արմատները կը տեսնեմ հայ դպրոցին, ազգային հայկական միջավայրին եւ հայադրոշմ ընտանիքին մէջ»:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Տաթև Աւագ Քահանայ Միջբայելեանի բարի գալուստի խօսքով եւ աղօթքով սկսաւ բացման արարողութիւնը:

Փառք տիրոջ, հազար փառք, որ մեր զաւակները յաճախելով հայ վարժարան, պարուն Մարգարին նշած ճանապարհով կ'առաջնորդուին:

Վարժարանի Կրթական Մարմինի ատենապետ Վազրիկ Շարապխանեան ողջունեց աշակերտներու, ուսուցիչներու եւ ծնողներու գալուստը, եւ 2024-2025 ուսումնական 46-րդ տարեշրջանը պաշտօնապէս բացուած յայտարարեց: Ան յայտնեց, որ վարժարանը տարուէ տարի վերելքի մէջ է, բան մը՝ որ կը պարտի անցեալի եւ ներկայ տնօրէններուն, ուսուցիչներուն, քարտուղարական կազմերուն եւ կրթական մարմիններուն, որոնք ճիգ չխնայեցին ու չեն խնայեր, որ վարժարանը յաջողի ջամբել գերագանց ուսում, տիպար նկարագիր եւ ազգային ու հայկական

Սարգիսեան աւելցուց, որ վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչակազմը պատրաստ են ծառայելու աշակերտութեան: Աւարտին, ուժ եւ կրօնով մաղթեց ուսուցիչներուն եւ յարատեւ յաջողութիւն՝ աշակերտներուն:

Ժողովուրդի մը ազատ, անվտանգ ու բնականոն զարգացումն ու յառաջխաղացքը կը կերտուին մշակոյթի, պատմական յիշողութեան, հայրենասիրութեան եւ ընտանիքի արժեհամակարգերուն վրայ: Վերոնշեալ արժեհամակարգերը առողջ հիմքերու վրայ կառուցելու համար անհրաժեշտ է համայն հաւաքականութեան կողմէ ազգին ծառայելու սկզբունքի ընկալումը: Ազգային գաղափարախօսութեան յենասիւններն են հայրենասիրութիւնն ու հայրենատիրութիւնը: Այնճարի պարագային, 85 տարիներու ընթացքին պահպանուեցան ազգային արժէքները, եւ Այնճարը արգասաւորուեցաւ հայրենատէր սերունդով: Այնճարի 85 տարիներու մաքառումն ու կենսագործունէութիւնը մուսալեռեան մեր մարտունակութիւնը վերանորոգելու եւ վերընձիւղելու ուղեցոյցն է:

Մուսա Լեռան լանջերու դիւցազնական մեր խոյանքն է, հերոսական գոյապայքարէ ետք, կորուսեալ ծննդավայրէն ետք, կամքը ունեցած ենք յառնելու եւ կենսագործելու Այնճարի լանջերուն: Գիտակից ենք նաեւ, որ բազում մարտահրաւէրները դիմագրաւելու համար անհրաժեշտ է Մուսա Լեռ-Այնճարի բոլոր զաւակներու միասնութիւնն ու ամբողջական ներուժի համախումբ մէկտեղումը՝ ամրակուռ պահելու համար հայկական միջնաբերդ Այնճարը:

Ստեղծագործ հայեր ենք, հերոսաբար հող պաշտպանած հայեր ենք, «Դաշոյն»-ներու ռազմապարի ծնունդ հայեր ենք, եւ եթէ մահն ու համաճարակները յաղթահարած ենք, հաւատացէ՛ք, որ մենք կը յաղթահարենք գալիք դժուարին փուլերը, որովհետեւ Խաչը՝ մեր հետն է,

Լեռը՝ մեր հետն է, Հաւատքը՝ մեր հետն է:

ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱԾԵԱՆ

«Սփիւոքի հաւաքական Գերութի թիրախային Գերգրաւուածութիւնը՝ համահայկական օրակարգի համատեքստում». ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան

ՀՅԴ Բիւրոյի անդամ, ՀՅԴ Հայ դատի կեդրոնական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյեանի ելոյթը «Դէպի կայուն եւ երկարաժամկէտ խաղաղութիւն» խորագրով քննարկմանը:

— Վերնագրում նշուած մի քանի բառերի, եզրոյթների սահմանումը, աւելի ճիշդ՝ գաղափարական ըմբռնումի սահմանումը պէտք է կատարել, որպէսզի յետոյ ասուելիքները իմաստ ունենան:

— Սփիւռքը ընդհանրապէս ընկալուած է որպէս Հայաստանից, ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնից դուրս ապրող հայութիւնը. բայց դա ոչ-ամբողջական բացատրութիւն է: Այսօր արդէն խօսուած է հայկական ոչ թէ մէկ Սփիւռքի, այլ Սփիւռքների մասին: Եթէ 25 տարի առաջ կարելի էր խօսել յատկապէս Ցեղասպանութեան հետեւանքով աշխարհասփիւռ եղած զանգուածների կողմից ձեւաւորուած Սփիւռքի եւ 1970-ականներից՝ խորհրդային եւ ապա վերանկախացած Հայաստանի Հանրապետութիւնից արտագաղթածներից ձեւաւորուած շերտի մասին, այսօր արդէն այս տեսակաւորումը ա՛լ աւելի է շերտաւորուել՝ հասարակութիւն, ոչ-հասարակութիւն եւ այլ շերտերով:

— Երկրորդը «հաւաքական ներուժն» է. հայկական Սփիւռքի կամ Սփիւռքների հաւաքական ներուժը ամբողջութիւնն է այն ներուժին, որ առկայ է թէ որպէս հաւաքականութիւնների եւ թէ որպէս առանձին անհատների ներուժը եւ այս՝ ոչ մէկ ձեւով միասնական, համագործած ներուժ է: Այդ ներուժը բազմաբնոյթ է՝ մշակութայինից մինչեւ առողջապահութիւն եւ առեւտուր, ֆինանսականից մինչեւ բարձր տեղնորդիաներ, եւ ինչ որ իմաստով՝ գրեթէ անսահմանափակ: Իրականութիւն է նաեւ, որ ո՛չ խորհրդային Հայաստանի եւ ոչ էլ՝ վերանկախացած Հայաստանի Հանրապետութեան օրերին՝ այս ներուժը կարելի եղած է սահմանել: Եւ դա ոչ որովհետեւ տեղեկահաւաքը ճիշդ կամ լաւ է կազմակերպուած, այլ՝ որովհետեւ խնդիրը տեղեկահաւաքի մէջ է, այլ տեղ է. ո՞րքէր է ետք կ'ստեմ:

— Երրորդը՝ «թիրախային ներգրաւուածութիւնը՝ համահայկական օրակարգի համատեքստում»: Նախ պէտք է սկսել «համահայկական օրակարգից». «համահայկական օրակարգը» իմ պատկերացմամբ՝ ընդգրկում է թէ՛ պետութեան պահպանման ու հզօրացման, եւ թէ՛ Սփիւռքի պահպանման ու հզօրացման համար կենսական խնդիրները, եւ «թիրախային ներգրաւուածութիւնը» վերաբերում է բոլոր ոլորտներում այդ ներուժի ներգրաւուածութեանը: Այլ խօսքով՝ թէ երկրի տնտեսութեան՝ բոլոր ոլորտներով եւ ճիւղերով, կրթութեան, գիտութեան, մշակոյթի, առողջապահութեան, բարձր տեխնոլոգիաների եւ պաշտպանութեան, ներքին եւ արտաքին քաղաքականութեան, արդարադատութեան եւ ցանկացած այլ բնագաւառում, իսկ Սփիւռքի կամ Սփիւռքների դէպքում՝ կրթական, մշակութային, քաղաքական ազդեցութեան, լայն իմաստով տնտեսական հնարաւորութիւնների ընդարձակման շուրջ կարելի է «համահայկական օրակարգ» ձեւաւորել եւ այդ օրակարգի խնդիրները լուծման համար օգտագործել ո՛չ միայն Սփիւռքի հաւաքական ներուժը, այլ նաեւ՝ պետութեան ամբողջ եւ հայ ազգի հաւաքա-

կան ներուժը. ոչ միայն պետական կառույցների, այլ նաեւ հասարակութեան տարբեր շերտերի եւ խմբերի եւ առանձին անհատների ամբողջական ներուժը:

— Որոշ գնահատականներ եմ տալու, հաստատումներ եմ կատարելու, որոնք չեն վերաբերում միայն Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւններին: Տարբերութիւնն այն է, որ ներկայ իշխանութիւնները մեծաւ մասամբ ապիկար են եւ որ աւելի վատն է՝ առաջնորդուած են մէկի կողմից՝ ո՛վ կա՛մ ինչ-ինչ պատճառներով անմեղունակ է, կամ՝ որ աւելի հաւանական է՝ այլ առաքելութեամբ է վերցրել իշխանութիւնը կամ բերուել, դրսի ուժերի կողմից բերուել իշխանութեան դեկին:

— Այսպէս. «համահայկական օրակարգը» ընդհանրապէս հասկացուել է որպէս հայկական պետութեան վերաբերեալ օրակարգ. խօսք էր եղել, կամ քիչ է եղել Սփիւռքի (կամ Սփիւռքների) կարիքներին վերաբերեալ օրակարգի մասին: Եթէ լինէր, պիտի ասուէր որ Սփիւռքի գոյութիւնը երկարաձգելու համար կենսական է «Հայաստան՝ երկիր դարձնելու» տեսլականի պայանումը: Վերանկախացման առաջին տարիներին, խօսք է գնացել նոյնիսկ դրա մասին, որ այս պետութիւնը, Հայաստանի Հանրապետութիւնը պատկանում է միայն նրանց՝ ովքեր այստեղ ապրում են, իսկ այս պետութիւնում կարող են ապրել այնքան մարդիկ միայն՝ որոնց այս պետութիւնը կարող է կերակրել: Մեր՝ Դաշնակցութեան համոզմամբ, «ազգը՝ իբրեւ պատմական, մշակութային, լեզուական եւ ընկերային-քաղաքական ուրոյն ամբողջութիւն, հիմնական արժէք է եւ էական գործօն՝ համամարդկային զարգացման ու հոգեմտաւոր բազմակողմանի հարստացման: Ազգը մարդկային ընկերութեան զարգացման ամենակենսունակ միջավայրն է, ուր անհատը ձեռք կը բերէ հոգեմտաւոր բարգաւաճման լայն հնարաւորութիւն, լիակատար հաղորդակցութեան եւ սեփական կարողութեանց զարգացման առաւելագոյն կարելիութիւն»: «Ամէն ազգի բնական եւ անկապտելի իրաւունքը կը կազմէ սեփական հայրենիքը — իր պատմականաշխարհագրական բնօրրանը — իբրեւ ինքնուրոյն գոյատեւման, յառաջդիմութեան եւ ստեղծագործութեան կենսական ազդակ: Իր հայրենի տարածքին վրայ իւրաքանչիւր ազգի գոյատեւման երաշխիքը անկախ եւ իրաւական պետականութիւնն է: Ան կը մարմնաւորէ [պէ՛տք է մարմնաւորել] ազգի քաղաքական կամքը, կը պաշտպանէ [պէ՛տք է պաշտպանել] անոր շահերը եւ կ'ապահովէ [պէ՛տք է ապահովել] անոր անվտանգութիւնն ու ինքնուրոյն զարգացումը: Անկախ պետականութիւնը նաեւ նախապայման է ընկերութեան բնականոն յառաջընթացին»:

— Բայց այսօր ի՞նչ ենք տեսնում. ոչ միայն ազգն ու պետութիւնը, այլեւ՝ ազգայինն ու պետականն են արհեստականորէն իրար հակադրուած: Երկար ժամանակ մեր սեփական պետականութիւնը եւ կամ անկախ պետականութիւնը չունենալուն է վերագրուում որ մենք՝ հայերս չունենք պետական մտածողութիւն եւ առաջարկուած է, նոյնիսկ պարտադրուած է որ այս պետականութիւնը դատարկուի իր ազգային նկարագրից: Պարտադրուած է արհեստականորէն խեղձութիւնը, աղճատել մեր անցեալի, հետեւաբար նաեւ մեր ներկայի ընկալումն ու ապագա-

յի տեսլականը: Եւ սա ներկայացուած է որպէս «նոր», «իրական» Հայաստան կերտելու ճիշդ: Պարզ է, որ նման մտածողութիւնով, այսպիսի «գաղափարական լիցքով»՝ աւելի ճիշդ՝ այսպիսի ապագա-գային գաղափարական սնանկութեամբ՝ գոյութիւն չունի եւ չի կարող լինել համահայկական օրակարգ: Այսպիսի ապագային գաղափարական գծով, միայն կարելի է տեսնել սեփական՝ ոչ թէ՛ պետական՝ սեփական շահը եւ այդ շահին համար՝ մնացածին, մեր կողքինին, մեր դիմացինին, դրսեցիին կարողութիւնները օգտագործելու, շորթելու հնարաւորութիւնը: Այս հակազգային գաղափարախօսութեամբ՝ եթէ կարելի է այդպէս կոչել այն՝ առաջնորդուելով միայն կարելի է 1990 թուականին Հայաստանի առաջին գումարման Գերագոյն խորհուրդի ընտրութիւններին Մարտունիից, Մարտակերտից, Ստեփանակերտից ու Արցախի այլ բնակավայրերից մասնակցած, տասնամեակներ շարունակ Հայաստանի Հանրապետութեան անձնագիր կրած տասնեակ հազարաւոր մարդկանց մի օրուայ մէջ ասել, որ «դուք Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի չէք. այդ անձնագիրը ընդամէնը ճամբորդական փաստաթուղթ է»:

— Ե՛ւ Հայաստանի Հանրապետութիւնը իր ամբողջութեամբ, պետական համակարգով եւ ժողովրդով ու հասարակական շերտերով ու անհատներով, ե՛ւ Սփիւռքը (Սփիւռքները)՝ իր/ենց համայնքներով, կառույցներով, խմբակցութիւններով ու անհատներով իրականում ունեն անհրաժեշտ ներուժը, որը կը բաւարարի ամբողջ ազգին, ներառեալ պետութեան բազմապիսի կարիքները հոգալուն: Քիչ առաջ ասում էի, որ խնդիրը այն է, որ այդ ներուժի մասին լաւ տեղեկահաւաք չի եղել, խնդիրը այն է, որ մեր պետականութիւնը պէտք է լինի այնպիսին, որ որպէս ազգի «ինքնուրոյն գոյատեւման, յառաջդիմութեան եւ ստեղծագործութեան կենսական ազդակ», իրեն ձգի այդ ներուժը: 1988 թուականից եղել են պահեր, ակնթարթներ երբ մեր պետականութիւնը, իր երկու՝ Արցախի ու Հայաստանի Հանրապետութիւններով, սկսել է այդ ձգողականութիւնը դրսեւորել: Բայց արդէն 2020 թ. Նոյեմբերի 9-ից յետոյ, ՀՀ ներկայ իշխանութիւնների վարած քաղաքականութեան պատճառով, սկսել է ինքնիրենից՝ Հայաստանի Հանրապետութիւնից եւ երբեմն էլ՝ ընդհանրապէս հայկականութիւնից հայերի վանելու գործընթացը:

— Տարիներ առաջ, մեր կուսակցութիւնը փորձագէտներից կազմուած մի խմբի պատուիրեց մի ուսումնասիրութիւն կատարել եւ դրա վրայ հիմնուած ծրագիր մշակել՝ նուազեցնելու Հայաստանի Հանրապետութիւնից արտագաղթը եւ խթանելու ներգաղթը: Եզրակացութիւնը եղաւ այն, որ նման առանձին ծրագիր չի կարող գործել՝ եթէ երկրի ամբողջ վիճակը չբարեփոխուի, եթէ չվերանայն պետական կառավարման բոլոր թերացումներն ու սխալները, եթէ Հայաստանի Հանրապետութիւնը չզրաւնայ այնպիսի հայկական պետութիւն, որ հայկական ինքնութիւն դաւանող մարդկանց հպարտութիւն չենք չնչի, եւ որպէս արդիւնք՝ դէպի իրեն չձգի հայերի, մեծ թուով հայերի: Ահա այստեղ է այս թեմայի վերնագրի հարցադրման բանալին ու պատասխանը. Հայաստանի Հանրապետութիւնը՝ ի վերջոյ նաեւ Արցախի Հանրապետութիւնը՝ պէտք է վերա-

ծենք այնպիսի պետութեան, որտեղից ոչ միայն մարդիկ ստիպուած չեն զգայ հեռանալու, այլ ընդհակառակը՝ այն դէպի իրեն կը ձգի ողջ հայութեանը, կամ առնուազն մեծ մասը հայութեան այն հատուածին, որ ունի ազգային մտածողութիւն, աշխարհայեացք, եւ այս ուղղութեամբ առնուազն մասնակի յանձնառութիւն:

— Հայ ժողովրդի, ամբողջ հայ ժողովրդի, ոչ միայն Սփիւռքի հաւաքական ներուժի՝ համահայկական օրակարգի շուրջ ներգրաւուելու համար այստեղ բնակուելը կարեւոր է, բայց միակ միջոցը չէ: Կարելի է կերտել այնպիսի պետականութիւն, որ աշխարհի մէկ հեռուոր անկիւնում, հայութիւնից հեռու ապրող մէկ հայ գիտնական՝ ցանկանայ՝ եւ աւելի կարեւորը՝ պետութիւնից հնարաւորութիւն ստանայ՝ իր մասնագիտական ներդրումը ունենալու երկրի զարգացմանը:

— Եղաւ ժամանակ, երբ խրախուսելու համար սփիւռքահայ գործարարների այստեղ ներգրուած կատարել, ասուած էր «եկէք, գուտ բիզնես շահի տեսանկիւնից ներգրուած արէք, հայրենասիրութեան կարիք չկայ»: Չի կարող այդպիսի բան լինել. առանց հայրենասիրութեան՝ հայ մարդը գուտ շահագիտական նպատակներով ներգրուած չի անի այստեղ. գուտ շահագիտական նկատառումներով ներգրուած անելու համար այստեղից շատ աւելի շահաւէտ վայրեր, երկրներ կան: Հայր, հայրենասէ՛ր հայր, անկախ բնակութեան վայրից եւ ունեցած քաղաքացիութիւնից, Հայաստանում այնքան ներգրուած պիտի անի՝ իսկ պետութիւնը ոչ միայն դա պիտի խթանի, այլ այդ ներգրուած նաեւ պիտի այնպէս պաշտպանի՝, որ ոչ-հայն էլ ցանկանայ այստեղ ներգրուած անել: Իսկ աշխարհի հեռուոր մի անկիւնում, հայութիւնից հեռու ապրող հայ գիտնականն էլ առանց հայրենասիրութեան՝ իր գիտական հմտութիւնները չի ներդնի Հայաստանի Հանրապետութեան զարգացմանն ու հզօրացմանը գործում:

— Համահայկական օրակարգի համատեքստում ամբողջ հայութեան՝ ոչ միայն Սփիւռքի՝ հաւաքական ներուժի թիրախային ներգրաւուածութիւնը ապահովելու գործում մեծ, շատ մեծ է պետութեան դերը, որ պէտք է ստեղծի հնարաւորութիւնը, հնարաւորութիւնները այդ ներգրաւուածութիւնը իրականացնելու: Իսկ այսօր ի՞նչ ունենք մենք, եւ սա միայն վերջին տարիներ ի խնդիր է. վերջին ջրա տարում, վեց տարում, տաս կամ քսան տարում միայն Հայաստանի Հանրապետութիւնում բնակուող ՀՀ քաղաքացիին, ով պատմական եւ կամ ինչ-որ այլ հանգամանքների բերումով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնից բացի մէկ այլ քաղաքացիութիւն ունի, մեր օրէնսդրութիւնը այդ հային համարում է անվտանգելի, երբեմն նոյնիսկ կասկածելի: Այսպէս, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնից բացի նաեւ այլ քաղաքացիութիւն ունեցող չի կարող լինել Կոռուպցիայի կանխարգելման յանձնաժողովի անդամ, Հանրային ծառայութիւնները կարգաւորող մարմնի անդամ, Մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողովի անդամ, Հեռուստատեսութեան եւ ռատիոյի յանձնաժողովի անդամ, չի կարող իրականացնել վիճակախաղի կազմակերպման գործուէնութիւն,

Փաշինեանի մամլոյ ասուլիսը փաստեց իր անկարողութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը ղեկավարելու

Իր վերջին մամլոյ ասուլիսին ընթացքին, որ տեղի ունեցաւ 31 Օգոստոս 2024-ին, վարչապետ Նիկոլ Փաշինեան անգամ մը եւս ցուցաբերեց թէ ան պէտք է անյապաղ հրաժարի:

Քանի որ թէ Փաշինեան եւ թէ իր նշանակած պաշտօնեաներն ու խորհրդատուները չեն գիտեր ինչ կ'ընեն, եւ ինքնակամ կ'առաջարկեմ ներկայացնել խորհուրդներս ու թելադրութիւններս, ինչ որ 30 տարիներ շարունակ կատարած եմ նախկին եւ այժմու Հայաստանի Հանրապետութեան ղեկավարներուն հետ:

Թէեւ ողջունելի է որ Փաշինեան կը փափաքի մամլոյ անդամներուն հետ հանդիպել եւ պատասխանել լրագրողներուն հարցումներուն, սակայն մամլոյ ասուլիսը պէտք է մէկ ժամէն աւելի երկար տեւէ, որպէսզի սակաւաթիւ մնան իր հակասական արտայայտութիւնները եւ քողարկէ իր անճարակութիւնը: Անցեալին, անոր մամլոյ ասուլիսները կը տեւէին չորս, նոյնիսկ 5 ժամ, կապկելով նախկին Սովետական եւ այժմու Ռուս ղեկավարութեան սովորութիւնը: Բարեբախտաբար այս անգամ Փաշինեանի ասուլիսը տեւեց միայն 2 ժամ եւ 17 վայրկեան: Բայց պատասխանելով այդքան հարցումներու, ան առիթ տուաւ ընդդիմութեան քննադատութեան թիրախ դառնալու:

Առաջին հարցը զոր կ'ուզէի քննարկել կը վերաբերի հարցումի մը Փաշինեանի պատասխանին եթէ Հայաստանը պիտի մասնակցի ՄԱԿ-ի միջազգային բնապահպանական համաժողովին որ տեղի պիտի ունենայ Նոյեմբեր ամսուն՝ Պաքո: Յուշու լին ամսուն երբ Հայաստանի Հանրապետութիւնը հրաւէր ստացաւ մասնակցելու ՄԱԿ-ի COP29 համաժողովին, կառավարութեան տեղեկութեան եւ հանրային յարաբերութեանց բաժանմունքը խոստացաւ որ Փաշինեան պատասխանը պիտի տար Օգոստոսի իր մամլոյ ասուլիսի ընթացքին: Սակայն Օգոստոս 31-ին երբ այդ հարցը կը հարցուի, ան՝ անփոյթօրէն կը պատասխանէ թէ տակաւին չէ որոշած, եւ երբ եզրակացութեան մը յանգի բոլորին լուր պիտի տայ: Եթէ իրաւացի պատճառ մը ունի որոշում չկայացնելու, հապա ինչո՞ւ կառավարութիւնը խոստացած էր Օգոստոսին վերջնական պատասխան տալ:

Ի պատասխան այն հարցումին թէ Հայաստանի կառավարութիւնը որեւէ ճիգ կը ցուցաբերէ հայ ռազմագերիներու ազատ արձակման համար, Փաշինեան — ինչպէս միշտ — մեղադրեալ կը տեսնէ բոլորին բացի ինքզինք: Ան անմիջապէս մոռացութեան կու տայ թէ ինքն էր որ 2020-ի պատերազմի աւարտէն անմիջապէս ետք անմտօրէն բոլոր ազերի ռազմագերիները ազատ արձակեց փոխան քանի մը հայ գերիներու: Ան պէտք էր ազատ արձակեր ԲՈՒՈՐ ազերի գերիները միայն ԲՈՒՈՐ հայ գերիներուն փոխարէն: Փաշինեան սայթաքում մը եւս կատարեց երբ համաձայնեցաւ Հայկական վեթոն վերցնել, թոյլ տալով որ Պաքուն հիւրընկալէ այդ հեղինակաւոր համաշխարհային խորհրդաժողովը: Նախագահ Ալիեւ այնքան բուռն իր ղ ղ ունէր որ այդ տեղի ունենար իր երկրին մէջ, որ համաձայն պիտի ըլլար ազատ արձակել ոչ միայն քանի մը, այլ բոլոր հայ ռազմագերիները եւ նոյնիսկ դուրս դար Հայաստանի սահմաններէն որոնք գրաւած էր 2021 եւ 2022 թուականներէն ի վեր:

Այնուհետեւ Փաշինեան բացայայտեց թէ Հայաստանն ու Ազրպէյճանը համացայնած են խաղաղութեան պայմանագրի 17-էն 13 յօդուածներուն: Ուրեմն Փաշինեան կ'առաջարկէ ստորագրել այդ պայմանագրի 13 յօդուածները, մնացեալը թողնելով ապագային: Սակայն ան չի հասկնար թէ Ալիեւ ոչ մէկ ցանկութիւն ունի խաղաղութեան Հայաստանի Հանրապետութեան հետ: Ան կ'ուզէ Հայաստանէն առնուազն որոշ ռազատարածքներ, եթէ ոչ ամբողջ Հայաստանի տարածքը, ինչպէս ան բառացի սպառնացած է բազմաթիւ անգամներ:

Նախ եւ առաջ հստակ է թէ Փաշինեան որքան ալ «խաղաղութիւն» հռուովէ, այդ կարելի չէ քանի որ Ազրպէյճան խաղաղութիւն չ'ուզէր: Կամքը պէտք է ըլլայ երկուստեք: Միակողմանի խաղաղութիւն գոյութիւն չ'ունի: Ապա, շարունակական խաղաղութեան պաղատանքներով, Փաշինեան կը քաջալերէ որ Ալիեւ նորանոր յաւելեալ զինուորներ պահանջէ Հայաստանէն:

Վերջապէս, խաղաղութեան պայմանագիրը Ալիեւի համար պարզապէս թուղ-թի կտոր մըն է որ պիտի ստորագրուի եւ

մոռցուի: Ան ոչինչ չի ներկայացներ: Այդ պիտի չի փրկէ Հայաստանի սահմանները երբ ազերի յարձակի ու ներխուժէ:

Փաշինեան յոխորտաց որ անցեալ ուրբաթ Հայաստանի եւ Ազրպէյճանի կառավարութիւններու ստորագրած սահմանագծման համաձայնագիրը առաջին իրաւական փաստաթուղթն է երկու երկիրներու միջեւ: Նախ՝ այդ մէկը տակաւին չէ վավերացուած, եւ ապա ան կը մոռնայ որ Հայաստանի, Արցախի եւ Ազրպէյճանի կառավարութիւնները զինադադար մը ստորագրած էին 1994 թուականին: Ան նաեւ կը մոռնայ թէ ինք, Բուլթին եւ Ալիեւ նոյնանման համաձայնագիր մը ստորագրած էին 2020-ի պատերազմէն յետոյ:

Պէյրուօի մէջ հանդիսաւոր ժողովրդային ընդունելութիւն՝ Կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի անփուտ մարմինին



53 տարի Հռոմ մնալէ ետք, կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան կաթողիկոս պատրիարքին անփուտ մարմինը Հինգշաբթի յետմիջօրէին հասաւ Պէյրուօի օդակայանը, ուր արժանացաւ պաշտօնական ընդունելութեան:

Պէյրուօի Նահատակաց հրապարակին վրայ երեկոյեան տեղի ունեցաւ կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի մարմինին հանդիսաւոր ընդունելութեան արարողութիւնը՝ նախագահութեամբ Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. կաթողիկոս պատրիարքին եւ մասնակցութեամբ պետական, կրօնական, քաղաքական եւ հասարակական գործիչներու ու Լիբանանի բոլոր համայնքներու ներկայացուցիչներու:

Ժողովրդային հանդիսաւոր ընդունելութեան ընթացքին խօսք առին Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. կաթողիկոս պատրիարքը, մարտին համայնքի պատրիարք կարտինալ Պշարա Ռայի, վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի եւ Պէյրուօի Հայ Կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գրիգոր Կպս. Պատրիարք:

Լիբանանեան ազգային եւ հայկական հոգեւոր երաժշտութիւններով հանդէս եկաւ լիբանանեան բանակի նուագախումբը:

Հանդիսաւոր արարողութեան աւարտին կարտինալ Աղաճանեանի անփուտ մարմինը թափօրով տեղափոխուեցաւ եւ ամփոփուեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Սուրբ Եղիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ գտնուող նորակառոյց շիրիմին մէջ:

Աղաճանեանի երանացման եւ սրբադասման դատի հանդիսաւոր բացումը կատարուած էր 28 Հոկտեմբեր 2022ին, իսկ 23 Փետրուար, 2024ին աւարտած էր անփուտ մարմինի կանոնական հետազօտութիւնը եւ վաւերականութիւնը:

Թերեւս ամենակեղտոտ ու տգեղ բաժինը մամլոյ ասուլիսին, Փաշինեանի կողմէ անտեղի կատարուած յարուցանելն էր Ռուբէն Վարդանեանի՝ Արցախի Հանրապետութեան նախկին պետական նախարարին մասին, որ որպէս պատանդ կը գտնուի Պաքուի բանտերուն մէջ, Սեպտեմբերի 2023-էն ի վեր: Փոխանակ կեդրոնանալու իր անգոյ ջանքերուն վրայ որպէսզի ռազմագերիները եւ պատանդները վերադառնան Հայաստան, Փաշինեան փորձեց նսեմացնել Ռուբէն Վարդանեանը ըսելով. «Ի՞նչ տեղի ունեցաւ: Ի՞նչպէս եղաւ որ Ռուսաստանի քաղաքացիութեան հրաժարեցաւ Ռուբէն Վարդանեանը: Ո՞վ խորհորդ տուաւ կամ յանձնարարեց զինք առնելու համար այդ քայլը: Ո՞վ ուղարկեց անոր այդ իմաստով Հայաստան: Ո՞վ անոր գործուղեց Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ նպատակներով: Ի՞նչ երաշխիքներով: Ի՞նչ խոստումներով: Եւ ո՞վ վերջապէս ըսաւ «գիտէ՞ք ինչ, մենք այդքան ալ լաւ չենք ճանչնար»

զինք, քանի որ ուրիշ երկրի քաղաքացի է»: Այս հարցերուն պատասխանները կ'ուզենք ունենալ, թէ չենք ուզեր»:

Կը շարունակէ ըսել «դուք ինքներդ նչցիք եւ ես այդ մասին կ'արտայայտուիմ: Պէտք է խոստովանիլ թէ իրօք լուրջ խնդիր է որ պէտք է քննենք եւ կը քննենք: Չեմ ուզեր աւելի մանրամասնութիւններու մէջ մտնել, բայց պէտք է ըսեմ որ խաղաղութեան իրականացման օրակարգին համար եւս կարեւոր է այս մէկը: Ընդ որուն, պարտադիր չէ յաջող վերջակէտը:» Փոխանակ օգնելու Վարդանեանին, Փաշինեան անոր ազատ արձակումը աւելի կը բարդացնէ:

Փաշինեան բազմաթիւ սխալներ կատարած է մամլոյ ասուլիսի ընթացքին, բայց զանոնք բոլորը համապարբալ ներկայացնելու համար պէտք է գրել ամբողջ գիրք մը:

Յարութ Սասունեան
Թարգմանեց՝ Կարէն Ծաֆէ Ծինպաշեան

Սփիւռք... Սփիւռք էջ 4

չի կարող լինել ՀՀ Կեդրոնական բանկի խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ կամ խորհրդի անդամ, չի կարող լինել դատաւոր, չի կարող նշանակուել մարզպետ, չի կարող ընտրուել Մարդու իրաւունքների պաշտպան, եւ այլն: Մի-ստամանակ, սակայն, միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի չհասնող իրացողի համար ոչ միայն արգելք չկայ այլ երբեմն կայ պարտադրանք՝ արդար պարտադրանք՝ ծառայելու զինուած ուժերում: Ուրեմն պիտի եզրակացնել, որ մեր երկրի սահմանները պաշտպանել կարելի է վստահիլ երկքաղաքացուն, բայց Հեռուստատեսութեան եւ ռատիոյի յանձնաժողովի անդամի գործ՝ ոչ, չի կարելի:

— Կարելի է առարկել, որ այլ երկրներում էլ կան նման սահմանափակումներ: Կարող է եւ կան. բայց այլ երկրներում կան նաեւ այլ կարգաւորումներ, որոնք արտասահմանում գտնուող կամ բնակուող քաղաքացուն փաստացի չեն զրկում համապետական քուէարկութիւններին մասնակցելու իրաւունքից: Իսկ մեր դէպքում այդպէս չէ. այն օրը երբ որդեգրուեց երկքաղաքացիութեան մասին օրէնքը, նաեւ ընտրական օրէնսդրութեան մէջ փոփոխութիւն կատարուեց եւ զրուտ գտնուողները եւ կամ բնակուողները զրկուեցին համապետական քուէարկութիւններին մասնակցելու իրաւունքից:

— Այլ երկրների դէպքում, նաեւ հետզհետէ զարգանում է իրենց օրէնս-

զիր մարմիններում՝ արտասահմանում բնակուող քաղաքացիները ներկայացնող պատգամաւորների ընտրութեան համակարգը: Սրանք իրականում մեխանիզմներ են՝ հիմնուած տուեալ պետութեան իւրայատկութիւնների վրայ: Մեր մօտ էլ քննարկուել են տարբերակներ՝ Սփիւռքից ընտրովի կամ նշանակովի, ներկայացուցչական եւ այլ՝ առաւելաբար բարձրագոյն գործադիր իշխանութեան որպէս խորհրդատու եւ այլն, բայց նաեւ որպէս օրէնսդիր երկրորդ պալատ: Սակայն, դրանք չեն հիմնականը. հիմնականը ազգի իրողութեան եւ համագաղայնի հասկացողութեան առկայութիւնն է կամ այդ հասկացողութեան բացակայութիւնը: Իսկապէս ուզո՞ւմ ենք մեր հաւաքական ներուժի ներգրաւումը համահայկական օրակարգի հարցերի կարգաւորման գործում. հարցը շատ աւտուտալ է այսօր. Կը պահե՞նք միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի հանդիսացող եւ վերջին վեցուկէս տարին պետութիւնը անդունդից անդունդ, կորստից կորուստ առաջնորդողին, թէ՛ վստահում ենք իր ամբողջ կեանքը ազգին, եկեղեցուն ու Հայրենիքին նուիրած մարդուն:



Բժիշկ Վազգէն Տէր Գալուստեանի ամփոփ կենսագրականը

Բժիշկ Վազգէն Տէր Գալուստեան ծնած է 27 հոկտեմբեր 1937-ին, Անտիոք: Ան զաւակն է տէր եւ տիկին Մովսէս եւ Անահիտ Տէր Գալուստեաններուն: Ծանօթ իրադարձութիւններու ի հետեւանք, ընտանիքը 1939-ին հարկադրաբար կը հեռանայ Մուսաղեռէն ու կը հաստատուի Լիբանան:

Ազգային ուսումը ստացած է Պէյրուսի Նշան Փալանճեան ճեմարանէն: Բժշկական հիմնական ու մասնագիտական (մանկաբուժական եւ ծինաբանութեան) վկայականները ստացած է Պէյրուսի ամերիկեան համալսարանէն (AUB) (1963, 1966), ԱՄՆ-ի Պոսթըն քաղաքի Հարվըրտ համալսարանի (մանուկներու հիւանդանոցի) բժշկութեան բաժանմունքէն (1966), Պալմբիմը քաղաքի Ճոն Հոփքինզ համալսարանէն (1968), այլեւ օգտուած է այլ հաստատութիւններու ընծայած յայտագրերէն՝ զարգացնելու համար իր հմտութիւնները:

Բժիշկ Տէր Գալուստեան ամուսնացած է 21 յունիս 1970-ին, Լեւոն Ալթեանին հետ: Անոնք բախտաւորուած են երկու դուստրերով՝ Սարին-Վանիա եւ Տարիա: 1986-ին ընտանիքին հետ փոխադրուած է Մոնթրէալ:

Իբրեւ մանկաբուժ եւ ծինաբան, ի շարք իր այլ յանձնառութիւններուն, Վազգէն Տէր Գալուստեան մնայուն թէ այցելու փրոֆեսոր, դասաւանդած է Պէյրուսի ամերիկեան համալսարանին (AUB) եւ Մոնթրէալի ՄԳԿԻԼ համալսարանին մէջ: Առաջինի պարագային նաեւ հիմնադր տնօրէնն է եղած Մարգրէային ծինաբանութեան ազգային միւստրին, իսկ երկրորդի պարագային վարիչ տնօրէնն է հանդիսացած անոր Մոնթրէալի մանուկներու հիւանդանոցի ժառանգական հիւանդութիւններու բաժանմունքին, ինչպէս նաեւ նոյն համալսարանի բժշկական ծինաբանութեան վարժողական յայտագրին:

Համահեղինակն է երեք մասնագիտական հատորներու՝ Genetic diseases of the skin (1979), The kidney in genetic disease (1986) եւ Congenital Anomalies of the Ear, Nose and Throat, (1997):

Ան առանձնաբար կամ համահեղինակութեամբ հրատարակած է նաեւ շատ մեծ թիւով գիտական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ զանազան թերթերու, հատորներու կամ տեղեկագրերու մէջ:

Հրաւիրուած է դասախօսելու միջազգային բժշկական բազմաթիւ համագումարներու, մաս կազմած է մասնագիտական զանազան միջազգային մարմիններու, անոնց կարգին նաեւ ՄԱԿ-ի բժշկական կազմակերպութեան յանձնախումբերու:

Արժանացած է մեծ թիւով բժշկական շքանշաններու, մրցանակներու եւ մեծարումներու, այլեւ ՄԳԿԻԼ համալսարանի «Պատուոյ փրոֆեսոր» տիտղոսին:

Վազգէն Տէր Գալուստեան ՀՅԴ շարքերը մտած է 18 տարեկան հասակին ու ամբողջ կեանքը եղած է անոր նուիրեալ զինուորակալը: Եղած է բազմիցս անդամ, այլեւ ատենապետ «Համազգային»-ի Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ անդամ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կեդրոնական վարչութեան:

Վազգէն Տէր Գալուստեանի յիշատակին

Ստորեւ կը հրապարակենք ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի խօսքը, ընթերցուած տոքթ. Վազգէն Տէր Գալուստեանի յուղարկաւորութեան ընթացքին, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2024-ին, Մոնթրէալի Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ մայր եկեղեցոյ մէջ:

Աստ հանգչի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի կառույցի վաստակաշատ կուսակցական ընկեր՝ Տոքթոր Վազգէն Տէր Գալուստեանը: Իր համակ կեանքը ազգին նուիրած մեր ընկերը միացաւ մեզմէ առյուծէն բաժնուած կուսակցական նուիրեալներու երկնային հոյիին:

Այնճարէն Պէյրուսի եւ Գանատա, իր ամբողջ կեանքին ընթացքին ան եղաւ անկողորմ հաւատքով եւ աներեր կամքով Հայ Դատի եւ հայութեան պահանջատիրութեան պաշտպանը:

Իր նկարագրով հեզ ու ազնուական, Դաշնակցութեան խոնարհ հերոսներու փաղանգին կը պատկանէր ընկեր տոքթոր Վազգէնը, որ անշահախնդրութեամբ եւ նուիրումով ծառայեց իր կուսակցութեան եւ ազգին:

Վեհանձն ու ազնիւ դաշնակցականի իր գործունէութիւնը կը պարփակուէր կուսակցութեան հիմնադիրներէն Սիմոն Զաւարեանի հետեւեալ խօսքին մէջ. «Դաշնակցութեան ուժը անհատներու չէ կապուած, ան շունչ մըն է, որ պէտք է տեղաւորուի եւ ամբանայ իւրաքանչիւր ընկերոջ սրտին ու հոգիին մէջ, մինչեւ մահ: Մեր ժողովուրդի շունչն է այդ, որ տարածուելով պիտի իյնայ անոր հաւատացող հոգիներուն մէջ եւ արգասաւորէ մեր գործը»:

Նկարագրով վեհանձն ու ազնիւ, ներկայ էր հոն՝ ուր պարտականութիւնը կը կանչէր զինք եւ այդ ծիրէն ներս, երկար տարիներ խոր նուիրումով գործեց Համազգայինի Կեդրոնական վարչութեան կազմէն ներս եւ նախագահեց Մուսա լեբան հերոսամարտի յօրեկնական յանձնախումբերուն:

Դաշնակցութեան առաքելութեան ու գաղափարախօսութեան աւանդապաշտ առաջամարտիկ որպէս՝ ինք անվհատորէն մաքառեցաւ Հայութեան արդար դատին ի խնդիր:

Ճանապարհը լուսաւոր ընկեր Վազգէն:

Ազգային գետնի վրայ ալ արժանացած է «Համազգային»-ի շքանշանին՝ 2008-ին եւ Կաթողիկոսութեան «Իշխան» շքանշանին՝ 2010-ին: Ան մահացաւ Մոնթրէալ 2024 սեպտեմբեր 4-ին:

Վ.Ա.Ա.

(Առաւելաբար քաղուած բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Բժիշկին Է. խօսքը» հատորէն)

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Այսու կը տեղեկացնենք, որ Մոնթրէալի մէջ, Daigle քաղամասին վրայ, 3 1/2 յարկաբաժին մը վարձու տրամադրելի է, Սեպտեմբեր 1-էն սկսեալ: Յարկաբաժինը եռայարկ առանձնատան (triplex) երրորդ յարկն է, կէս-կահաւորուած եւ նորոգուած է: Յաւելեալ տեղեկութիւն ստանալու համար կրնաք հեռաձայնել Մակիին, 438 365 4730 հեռախօսահամարին:



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՄԻՍԳՈՅՆ ՍՊԱՍՍԵՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՍԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Բացուցէ՛
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

Chadir Meat & Restaurant
T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

Vahram Pirjanian
President
2175 Sheppard Ave. East,
Suite 215, Toronto
Ontario Canada M2J 1W8
Tel: 416-497-0377
Fax: 416-497-0783
cell: 416-574-6704
info@MetrasShipping.com
www.MetrasShipping.com

ARZ fine foods
The Essence of Mediterranean Gourmet Since 1989
Website: arzfinefoods.com
Email: info@arzfinefoods.com
Scarborough Location
1909 Lawrence Ave E,
Scarborough, ON M1R 2Y6
(416) 755-5084
Mississauga Location
720 Bristol Rd W,
Mississauga, ON L5R 4A5
(905) 502-9292

Haroot Sepan
T +1 (416) 900 8626
F +1 (416) 900 8659
C +1 (416) 939 1895
haroot@araratfoods.com
www.araratfoods.com
Ararat Trading (2002) Corp
5820 Kennedy Rd Mississauga,
ON L4Z 2C3 CANADA

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Gary Chahinian
President, Broker of Record
416-258-8892
Gabriel Chahinian
Sales Representative
647-580-5818
The Diamond Realty

I.D.A.
Part of the Revall family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2
Tel. : 416.449.2040
Fax: 416.449.2048

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Baku rejects Yerevan's latest proposal to sign peace treaty

YEREVAN—Azerbaijan's foreign ministry on September 9 rejected an offer by Yerevan to sign the latest version of a peace treaty between Armenia and Azerbaijan.

Foreign Minister Ararat Mirzoyan said that the latest version of the draft peace treaty proposed by Armenia to Azerbaijan contains fully agreed upon text and articles, adding that it can be signed in the near future.

"It is no longer a secret that this version, by and large, contains a fully agreed upon text. These are fully agreed upon articles or the agreed upon parts of several articles. We are waiting for Azerbaijan's response," Mirzoyan said, during a joint press conference with Xavier Bettel, the Deputy Prime Minister and Foreign Affairs of

Luxembourg who is on an official visit to Armenia.

"We don't have disagreements on the text anymore," Mirzoyan told the joint news conference. "The problem is that sometimes the Azerbaijani side tries to include other pre-conditions or issues in the overall negotiation process. Our approach is that we can sign the agreed text days very soon."

Azerbaijan's foreign ministry spokesperson Aykhan Hajizada said that Yerevan offer was unacceptable to Baku, emphasizing that the peace treaty can be signed once all provisions are agreed upon.

Hajizada also reiterated Azerbaijan's accusations against Armenia and demands that Armenia must change its constitution before a peace treaty is signed.

IUSY Vice-President Sarineh Abrahamian engages parliamentarians on COP29



YEREVAN—From September 6 to 10, the International Union of Socialist Youth (IUSY) presidium meeting and the Young Social Democratic Parliamentarians Forum were held in Rabat, Morocco. Sarineh Abrahamian, IUSY Vice-President and member of the Armenian Revolutionary Federation (ARF), took part in these meetings.

The IUSY presidium meeting addressed organizational and financial matters, alongside discussions on the 2025 activity plan. IUSY Vice-Presidents presented updates regarding their region and delivered organizational reports. In her presentation, Sarineh Abrahamian highlighted the external challenges currently facing Armenia, particularly Azerbaijan's aggressive stance, its violations of Armenia's territorial integrity, and the demands for concessions under the threat of force. She also spoke about Armenia's internal political situation, including political persecutions by the government and the excessive use of police force against opposition members and individuals.

Additionally, the upcoming COP29 event and possible actions related to it were discussed. Abrahamian recalled

Azerbaijan's ethnic cleansing in Artsakh, the ongoing captivity of Armenian prisoners of war, and the illegal detention of Artsakh's leadership in Azerbaijan. She also brought attention to the destruction of Artsakh's cultural and religious heritage. Moreover, she outlined Azerbaijan's poor human rights record, Azerbaijan's environmental pollution, the country's dictatorship and the absence of democracy.

During the Parliamentarians Forum, Sarineh Abrahamian met with MPs from Morocco, Colombia, and Cape Verde, discussing issues related to COP29. She emphasized Azerbaijan's aggression towards Armenia and stressed the urgent need for the release of Armenian prisoners of war and Artsakh's leadership, currently held captive in Baku.

Abrahamian urged the MPs to call on their governments to condemn Azerbaijan's policies and advocate for the release of the prisoners, as well as to end the hostile actions against Armenia. Although the deputies mentioned that their countries' participation in COP29 had not yet been officially announced, they pledged to monitor the developments and raise the issue with their respective governments.

No charges filed against police over violent crackdown on opposition protesters

YEREVAN—Law-enforcement authorities have not prosecuted any of the police officers who injured dozens of anti-government protesters in Yerevan three months ago in a crackdown condemned by Armenia's leading civic groups.

Thousands of people led by Archbishop Bagrat Galstanyan gathered on June 12 on a street outside the Armenian parliament building to demand Prime Minister Nikol Pashinyan's resignation following his territorial concessions to Azerbaijan. Scuffles broke out there moments before security forces hurled dozens of stun grenades into the crowd. At least 83 protesters and eight journalists were injured as a result.

The use of force was strongly condemned by not only Galstanyan's opposition-backed movement but also 17 mostly Western-funded NGOs. In a joint statement, the latter call it "unnecessary, disproportionate and illegal."

Armenia's Investigative Committee defended the crackdown, saying that it stopped "mass disturbances." Echoing Pashinyan's claims, it also said the protesters tried to break through police cordons to storm the parliament.

Only one man was accused of participating in the "mass disturbances." Fourteen other protesters were charged with "hooliganism" that mainly took the form of plastic bottles and other objects thrown at the riot police.

Two days after the violence, the Investigative Committee announced the launch of a criminal inquiry into "the proportionality and legality" of the police actions. The law-enforcement agency headed by one of Pashinyan's trusted lieutenants has not indicted anyone as part of that probe.

Zaruhi Hovannisyan, a human rights activist, said on September 12 that the investigators' failure to prosecute any policemen is politically motivated. Pashinyan's claim that

